

գայնոց օրինակ ըլլալու համար՝ նախ և առաջ մեծ մասամբ իւրաքանչիւրն 100ական և 150ական ոսկի գրուած են Հանդանակութեան :

Յանձնաժողովոյ Մեծապատիւ անդամք որք են՝ Նորատունկեան, Մագսուտեան, Մանիկեան, Կիւլպէնկեան, Հալաճեան, Փափազեան, Կիւմիշեան, Եսայեան Կիւմիշկերտանեան, Քիւրքճիւլպաշեան, Միրասեօտեան, Մերեմիզուլեան և Իկրտպաշեան էֆէնտիններն, արդէն ընդհանուր (*) Ազգին ծառայող սիրելի և վտասհիշի անձինք են. նոցա փութաջանութեան և գործունէութեան հետ՝ իբր Ազգին մի յետին եկեղեցականն մեր յորդորներն ալ կրկցենք և կիսորներ մեր աղքատասէր և զթոռ ազգայիններէն՝ որ յօժարակամ գտնուին աջակից և գործակից լինել Գթութեան Յանձնաժողովոյ մեծ գործին :

Ամեն Հայ՝ որ իր քսակին մէջ հինգ պղինձ դրամ ունի՝ թող յօժարի մին կամ երկուսն Յանձնաժողովոյ տալ և հաւատալ թէ իր երկու դահեկանովն մի սովատանջ Հայ պիտի ապրեցնէ :

Կրկին շնորհակալեաց արժանի է նաև Բարձրաշնորհ Սրբազան Պատրիարք Հօր այս մասին Յանձնաժողովոյ հ'տ յառաջ տարած ջանքն, որ Կարնոյ, Պրուսայի, Իգմիւռնոյ, Նիկովիզիոյ, Ռոստոմոյի Առաջնորդ Ս. Հարց կրկին գրեր գրել տուած է, որ անմիջապէս Հանդանակութիւն մը բանալով՝ եղած արդիւնքն Յանձնաժողովոյ առաքեն :

Նոյնպէս Զրարատեան Մայր Աթոռոց Աստուածարեալ Սրբազան Հայրապետին հետագիր*) քաշելով՝ Ասիոյ սովորոց աղէկտուր վիճակն ծանուցեր և Նոյին Աեհափառութեան Հայրական գրութիւնը խնդրեր է Բարիոյս եմք՝ որ Ռուսաստանի մէջ եզոզ մեր սիրելի ազգայինք ևս կը փութան իրենց ձեռնտուութիւնն ընել, և այս միջոցներով թերևս կարելի ըլլայ դրամական մեծագումար հաւաքում մը գոյացնել և այնու հոգալ տառապելոց կենաց սնունդը :

Լոյս, Թիւ 11, Նոյեմբ. 1.

(*) Այս հեռագիրն ի ժամանակին հասաւ Վեհ. Հայրապետին, որ և առայժմ կարելի եղած ձեռնտուութիւնք փութաց հասուցանել 500 ոսկուի նպատակով առ Գեր. Ս. Պատրիարքն և Պաշտոյ յանուն սովելոց :

4000 Լ. Ռ. Ս. Ս. Ն. Ռ. Ի. Ն.

Պօլսոյ Պատրիարքարանի ի բազմաց հետէ բարդուած պարտքը ոչ միայն բաւական յուզմանց, այլ և տեղական Ազգային գործոց և Պատրիարքարանի և վարչութեան զբամական նեղ վիճակին և յամր ընթացից առիթ կը տար, զոր երևելի երկու Ազգայինք մեր նուիրատուութեամբ վճարելով՝ մեծ բարեգործութիւն կատարեցին :

4000 լիւրան՝ 28 հազար մանէթի չափ գումար կը ունէ :

Այս առթիւ հետեւեալը կ'օրինակուիք Մասիսէն :

«Գոհութեամբ կիմանանք թէ Կեդրոնական սրտուակին 4000 լիւրայի չափ պարտքը հասուցանելու համար Ասեմ՝ Աբրահամ փաշայի և Ասեմ Սարգիս պէյի կողմէ խոստացուած վիճանական առատաձեռնութեան շնորհն այս օրերս իւրագործուեր է, Քաղ. Ժողովոյ ատենապետ Աբրահամ Սիմոն պէյի ձեռք, հետեւաբար Պատրիարքարանի մէջ յատուկ մասնաժողով մը կազմուելով պարտապահանջները պիտի հրաւիրուին և իւրաքանչիւրին իրաւունքն իրեն հատուցուի :

Սեպտեմբ. 28 այդ երկու Ասեմախոհ բարեբաղք, որ իրենց երկնապարզ կարողութիւնն իրենց Ազգին և նմանեաց օգնելու կգործածեն այսպէս ազնուաբար և իրենց անունն ու յիշատակը կանմահացնեն պատմութեան մէջ :

Մասիս Թիւ 4609, Նոյեմբ. 14.

Հ Ա Մ Ա Ռ Օ Տ Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ի Տ Ա Ւ Ի Ո Յ Լ Ի Վ Օ Ր Ն Օ Գ Ա Ղ Ա Ք Ի Գ Ա Ղ Ք Ա Կ Ա Ր Հ Ա Յ Ո Ց Ա Ե Ր Ա Ս.

Ազգային պատմական կենաց հարցատիրութիւնն երբեմն այնպիսի յիշատակարաններ յերևան կհանէ որք կամ բոլորովին անծանօթ են մեր Ազգայնոց, կամ խիստ սակաւուց միայն ծանօթ :

Մինչդեռ մեր Տրամսիլլանիոյ Աեհաստանի և Հունգարիոյ մէջ Հայ Գաղթականաց տխուր հետքերն և կենդանի մնացորդներն նշմարելով կարտասուէկներ և կը կարծէինք թէ Հայկական Գաղթականութեան հոսանքն միայն յիշեալ երկիրն

Հասած և սիրուած է Երբ Գեորգիայէն ճանապարհորդելով յԻտալիա Հասանք, Հարցասիրելով իմացանք, որ Իտալիան ևս ասպնջական եղած է Հայ Գաղթականութեան Իմացանք (Թէ և խիստ Հարեանցի ծանօթութիւն ունէինք առաջուց) որ Լիփորնօ կամ Լիփուրն քողարքին մէջ բաւականին Հայք եղած են ի ժամանակին և յատուկ եկեղեցի ունեցած են, երկար տարիներ անարատ պահպանելով իրենց դաւանութիւնն ու արարողութիւններն, բայց ի վերջոյ բուն ազգային քահանայից կամ Հովուաց պակասութենէն, և թե՛րևս Պապական ընտարութենէն, անհետած են օտարադաւանութեան մէջ, ընդ նմին կորուսանելով իւրեանց ազգայնութիւնն:

Այս տխուր գրոյցն կամ պատմութիւնն Հետազօտելու ժամանակ մեր ձեռքն անցաւ Իտալերէն մի բաւականին ընդարձակ հրատարակութիւն, 1870 թուականին տպագրուած, որով ամենայն միութիւն պարզեցաւ: Այս հրատարակութիւնն է մի դատաստանական արձանագրութեանց հաւաքածոյք, որոյ մէջ վաւերական փաստերով կը պատմուի թէ ի՞նչպէս Լիփորնօյի Գաղթական Հայք եկեղեցի շինած և երկար ժամանակ անկախ կառավարած են, և թէ ի՞նչպէս նոյն եկեղեցին դաւաճած է Իտալիոյ Պապականութենէն՝ երբ ըսկրած էր նա դրանց եկեղեցական կալուածներն:

Սոյն հրատարակութիւնն ունի այսպիսի վերնագիր Parere Legale sopra le ufiziate della Chiesa Armena Stabilita in Livorno. - Օրէնքն որդէնքն թե՛ն յայտնի հիմնաքննութեան Եկեղեցոյն Հայոց է Լիփորնօ:

Յիշեալ հրատարակութիւնն թէ և շատ հարցասիրական տեղեկութիւններ կ'պարունակէ, ահանէ յանուանէ թուելով եկեղեցւոյ հիմնադրաց անուններն, ապերսագրութիւններն, ստացած արտօնագրերն, ի վերջոյ վարած դատերն, տեղական իշխանութեան և Թուրքիոյ Տէրութեան ոմանց զեպականց պաշտօնական հաղորդագրութիւններն, բայց մեր այս ամենն թողլով և մեր մի քաջ իտալացի բարեկամի օժանդակութեամբ միան պատմական խիստ հարեանցի կէտերն թարգմանելով և համառօտելով կնիքայայտները ի գիտութիւն մեր սիրելի ազգայնոց, հետեւեալ վեց հատուածով:

Ա. 1833 թուականին Լիփորնօ քաղաքին մէջ բնակեալ Հայք (1) գետին կղնեն Լատին կրօնաւորներէն, ազգային եկեղեցի, քահանայից ընտանկարան և ազգային աղքատանոց շինելու համար Այս առթիւ հանգանակութեան ստորագրութիւն կրանան, որոց զրոյն կ'գտնուի Ապրո 2 էլէպի և սակարկեալ զեանի զինն կ'լծարեն 100000 Փրանք:

(1) Անոնան հեղինակն իւր կողմէն գրուած տղերուն մէջ քանի մի տեղ, փոխակի ուղղակի Հայք անուանելու, Կարոյիք Հայք կ'անուանէ, մինչդեռ տերտակի մէջ զեանեալ վաւերական պաշտօնագրութեանց մէջ ամենեւին Կարոյիք յաւելուած վկայ Հայ բառն վերայ:

Բ. — 1697 թուականին, Հայք տեսնելով որ իրենց առաջին դրամական հանգանակութիւնն ունուէրնեմն բաւական չեն եկեղեցւոյ շինութիւնն աւարտելու համար յատուկ տուրք կ'ահաճանեն թէ տեղական և թէ նոյն քաղաքէն անցնող ազգակցաց վաճառքներու վերայ որք կամ ի ինչմէն կ'ահահանջուին, կամ իրենք օտար երկիրներ կը զրկեն ծախուելու: Սոյն տրոց պայմանագրութիւնն ևս կ'ավերանայ թէ իրենց ստորագրութեամբ և թէ Տէրութեան կողմէն:

Գ. — Եկեղեցւոյ շինութիւնն աւարտուելէն զինի՝ հասոյթներ կ'ահաճանուին, որպէս զի ժամերգութիւնքն շարունակ և անխափան կատարուին:

Դ. — 1866 թուականին, երբ Իտալիոյ կրօնական Կարգերն ընջելու օրէնքն կ'հրատարակուի, Պալուածոց Պաշտօնատունն կ'ըսկի ինչիր յարուցանել Հայոց Եկեղեցւոյն նկատմամբ, և հրապարակեալ օրինաց զօրութեամբ դիտաւորութիւն կը յայտնէ՝ յիշեալ եկեղեցւոյն և իւր կալուածներուն տիրելու:

Ե. — Գատարանն օրինական տեղեկութեանց զիմելով և ստեղծական արձանագրութիւններն հետախուցելով կ'լծնէ թէ՛ որովհետեւ Եկեղեցւոյ և իւր կալուածոց վարչութիւնն աշխարհականաց ձեռքն է (1), ուստի և ազատ է զրաւմանէ և միշտ պէտք է մնայ ի ձեռս Հայոց մանաւանդ որ սոյն հաստատութիւնն շինուած է տեղական Պապականութեան հրամանաւ և այնպիսի անձանց ձեռքով, որք հպատակ են օտար Տէրութեան այն է Թուրքիոյ:

Զ. Չնայելով դատարանի իրաւագիտական վրձառոյն զոր նոյն իսկ Արտաքին Գործոց Նախարարն համաձայն կ'զմէ իրաւանց և օրինաց, Պալուածոց Վարչութիւնն կ'զրաւէ Հայոց եկեղեցւոյ կալուածներն ու հարստութիւնն: Այս իրողութիւնն որչափ ցաւոյի է նոյնչափ և անհասկանալի. նա մանաւանդ երբ կոտեսուի որ Իտալիոյ Պապականութիւնն ոչ այնքան յայտնի պատճառներով, զրաւման օրէնքէն ազատ կ'կացուցանէ այն սուներն, որոնք զանազան կրօնական Կարգաց կ'պատկանին:

Մ. Վ. Մ.

Սիւն, Թ. 8 Օգոստ.

(1) Թէ ո՞չք են սոյն աշխարհականքն, որ 1866 ին Հայոց եկեղեցին կը կառավարեն, ամենեւին յայտնի չէ: Ո՞չք են դատ և իրաւունք պահանջողներն այն թուականին մէջ, զարձակող յայտնի չէ: Կարծես թէ այստեղ ևս մեր առջեւ կ'ենն առեղծուածն Մուստեան Վարժարանի, որոյ դրամագրութիւն բուն Հայոց ձեռքով և բուն Հայութեան համար կ'կատակուի, և սակայն Կարոյիք հայութեան ձեռքն կ'մտայ. Մի՞ գուցէ Մըլիթարեան Միսթանք, իրենց Ռեխտի գոյութենէն շատ և շատ տարիներ առաջ հիմնուած եկեղեցւոյն և իւր կալուածներուն իրեւ տէր ներկայանալով գատ վարած են և դատն լրուութեամբ կ'ըրուած, առանց գիտութեան Ազգին: Կը յաւանդէ թէ մեր սոյն երկուց հրատարակութիւնն առիթ լինի այս մը թութիւնն պարզելու: